



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 18 ՄԱՅԻՍ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բապմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

**Մեծ ու զարմանալի եւ Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ եւ ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:
Տէր, ո՛վ չի վախենում Քեզնից, Ո՛վ է, որ չի փառաւորում Քեզ,
Քանի որ Դու ես միայն սուրբ, (2); Միայն սուրբ: (3)
Բոլոր ազգերը պիտի գան Քո առջեւ ու Քեզ պիտի երկրպագեն,
Քանի որ իրաւունքներդ յայսնուեցին Բոլոր ազգերին, Ո՛վ Թագաւոր:**

ԱՂՈՐՔ

Տէ՛ր Աստուած մեր, կը փառաւորենք Գու սուրբ անունդ, Գու ստեղծագործութեանդ մեծութեան եւ գեղեցկութեան համար: Դուն երկինքը զարդարեցիր փառքով ու վայելչութեամբ, եւ երկիրը լեցուցիր Գու բարիքներով: Ստեղծեցիր լեռները, ծովերը, ծառերը ու բոլոր արարածները, Գու ամենագործ խօսքիդ գործութեամբ: Ու այդ բոլորին վրայ իշխան կարգեցիր Գու պատկերովդ ու նմանութեամբդ ստեղծած մարդուն: Շնորհակալութիւն Քեզի, որ Գու հայրական սիրովդ կը հո-գաս մեր կարիքները: Ըրէ այնպէս, որ միշտ Քեզմով ուրախանանք, եւ փառք տանք Գու հոգատարութեանդ համար: Նորոգէ մեր հոգիները, Գու Սուրբ Հոգիիդ նորոգութեամբը, ու լեցուր մեզ երկնային շնորհներով: Միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ, Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:
Փրկել գմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչես-
ցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ
Աստուածամէնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ
Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈՐՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

ՍԱՂՍՈՍ 104

ՆԵՐՔՈՂ ԱՐԱՐԻՉԻՆ

Դուն ստեղծեցիր լուսինը՝ որոշելու համար ամիսները,
եւ արեւը՝ օրն ու գիշերը գիտնալու համար:
Դուն խաւարը կը բերես՝ եւ գիշեր կ'ըլլայ,
երբ անտառին գազանները մէջտեղ կ'ելլեն,
առիւծի կորիւնները կը մոնչեն որսի համար,
իրենց ուտելիքը խնդրելով Աստուծմէ:
Երբ արեւը կը ծագի՝ կը հաւաքուին,
եւ իրենց որջերուն մէջ կը պանկին:
Իսկ մարդը իր գործին կ'երթայ, աշխատելու մինչեւ երեկոյ:
Ինչքան բազմազան են գործերդ, Տէր,
զանոնք բոլորը իմաստութեամբ ըրեր ես,
աշխարհը լեցուն է ստեղծածներովդ:
Ահա ծովը, մեծ եւ ընդարձակ,
ուր կը վիտան պզտիկ ու մեծ անհամար կենդանիներ,
ուր նաւերը կ'երթեւեկեն,
ուր կը խաղայ վիշապը որ դուն ստեղծեցիր:
Ասոնք բոլորը քեզմէ կ'ակնկալեն իրենց ուտելիքը,
որ կու տաս իր ատենին:
Կու տաս անոնց՝ եւ կը կերակրուին,
ձեռքդ կը բանաս՝ եւ անոնք բարիքներով կը լիանան:
Երբ անոնցմէ երես դարձնես՝ խոզվի կը մատնուին,
եւ անոնցմէ հոգին առնես՝ կը մեռնին եւ հողին կը դառնան:
Ապա Հոգիդ կը դրկես՝ եւ նորերը կը ստեղծուին,
եւ աշխարհը կը վերանորոգես:
Տիրոջ փառքը թող որ յաւիտեան մնայ,
թող Տէրը միշտ իր գործերով ուրախանայ:
Երբ աչք մը նետէ աշխարհին վրայ՝ աշխարհը կը դողայ,
երբոր դպչի լեռներուն՝ անոնք կը ծխան:
Ամբողջ կեանքիս ընթացքին Տիրոջ համար պիտի երգեմ,
իմ Աստուծոյս ներքող պիտի երգեմ որքան ատեն որ ողջ եմ:
Թող մտածումներս հանելի ըլլան Տիրոջ,
որովհետեւ ես իրմով կ'ուրախանամ:
Մեղաւորները թող աշխարհէն ջնջուին,
ամբարիշտները ալ գոյութիւն չունենան:
Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս.
օրհնութիւն երգեցէք Տիրոջ:



ՆԵՐՔՈՂ ԱՐԱՐԻՉԻՆ - Մաս Բ

Կը շարունակենք 104 Սաղմոսը, արդէն հասած ենք 19-րդ համարը, ուր կը ներկայացնէ լուսնին ու արեւուն սրեղծուիլը, այն ինչ Ծննդոց գիրքին մէջ չորրորդ օրն է: Այսպէս նաեւ կը ներկայացնէ թէ ինչո՞ւ սրեղծեց, որոշելու համար ամիսները, օրն ու գիշերը գիտնալու համար: Մա ցոյց կու տայ, որ Աստուծոյ սրեղծագործութիւնը ոչ թէ միայն բան մը սրեղծելն է, այլ՝ ի՞նչ նպատակի համար, այսինքն՝ ոչ թէ ինչպէ՛ս սրեղծեց, այլ՝ ինչո՞ւ սրեղծեց: Բայց երբ կը կարդանք եկեղեցւոյ հայրերուն գրութիւնը այս հարուածին կապուած, ապա այնպէս ատի խորը բացատրութեան կը հանդիպինք, անդին սովորական լուսնի ու արեւու երեւոյթէն: Որքան ալ այդ նիւթական արեւն ու լուսինը կան, բայց անոնց երին կայ հոգեւոր իմաստը: Նիւթական իմաստով գիտենք, որ լուսինը իր լոյսը կ'առնէ նոյնինքն արեւէն: Այս փրամաբանութեամբ ալ եկեղեցական հայրերը անոր մէջ տեսած են Քրիստոսի եւ եկեղեցւոյ պատկերը: Ահա թէ ինչու, մեր եկեղեցւոյ շարա-կանները յաճախ Քրիստոսը կը ներկայացնեն նաեւ որպէս իմանալի լոյս, ճշմարիտ արեգակ, արդարութեան արեգակ: Օրինակ Մեծ Պահքի ժամանակ Արեւագալի ժամերգութեան պահուն, երբ կ'երգենք Յարեւելից շարականը, այնպէս որքան ալ կը խօսի նիւթական լոյսի մասին, նոյնքան եւ Քրիստոսի մասին: Ուրեմն եթէ ճշմարիտ արեգակը Քրիստոսն է, ապա եկեղեցին ալ կը ներկայացնէ լուսինը, որուն լոյսը կու գայ նոյնինքն՝ ճշմարիտ Արեգակէն: Անոր համար ալ այնպէս ինչպէն լուսինը պահ մը խաւարի մէջ, կամաց կամաց կը սկսի ծնունդ առնելու, նոյնպէս ալ եկեղեցին խաւարի մէջ, Քրիստոսով կը սկսի ծնունդ առնելու: Այնպէս ինչպէս լուսինը միշտ չունի այդ լոյսը, այդպս ալ եկեղեցին մնայուն պիտի չլլայ երկրի վրայ, որովհետեւ պիտի գայ ժամանակ երբ եկեղեցին փոխադրուի եւ երթայ հոն ուր է Քրիստոս: Ինչպէս լուսինը եղանակներն ու ամիսները որոշելու, այլ խօսքով ուղղութիւն փալու մարդկութեան: Հերաքրքրական արտայայտութիւն է 20-23 համարները, ուր կը ներկայացնէ խաւարի, գիշերուան, անբառի գազաններուն մասին, ինչպէս նաեւ արեւուն ծագելուն գազաններուն հաւաքուիլը որջերուն մէջ հաւաքուիլը, իսկ մարդը իր գործին երթալը: Սովորական երեւոյթի կողքին նաեւ հոգեւոր իմաստը այն է, թէ Քրիստոսի խաչելութեամբ խաւար փրկեց կ'ըսէ Աւետարանիչը, ոչ միայն սովորական խաւար, այլ՝ աշակերտներուն սրտին մէջ ալ խաւար, կասկած, թէ ինչպէս կ'ըլլայ, որ իրենց վարդապետը կը ձեռքակալուի, կը դարապարտուի մահուամբ: Իսկ անբառի գազանները, որ չարը խորհրդանշող, աշիւծի կորիւնները որ իրենց որսը կը փնտռեն, իրենց ուրելիքը կը խնդրեն Աստուծմէ, հերաքրքրական է, որ առանց Աստուծոյ թոյլտրութեամբ, նոյնիսկ չարը չի կրնար ոչինչ ընել: Իսկ Առաքեալները ի՞նչ վիճակի մէջ էին, երբ Քրիստոս ձեռքակալուեցաւ, միթէ գազաններուն որս ըլլալու վիճակի մէջ չէին, օրինակ՝ Պետրոս Առաքեալ, որուն համար Քրիստոս կը յիշեցնէ, թէ չարը կ'ուզէ զիրենք ցորենի պէս աղալ, բայց Քրիստոս կ'ըսէ, աղօթեցի ձեզի համար: Մակայն, երբ արեւը ծագի, անոնք իրենց որջերուն մէջ կը պառկին, իսկ մարդը գործի կ'երթայ, ի՞նչ գործ, Աստուծոյ դաշտին մէջ աշխատելու: Յետոյ կը ներկայացնէ բազմազանութիւնը Աստուծոյ սրեղծագործութեան, որ այդ բոլորը իմաստութեամբ ըրաւ: Հերաքրքրական է, որ այսպէս լռելեայն կը ներկայացնէ Քրիստոսով սրեղծած ըլլալը, այնպէս ինչպէս Յովհաննէս Առաքեալը կ'ըսէ. "Ամէն ինչ անով եղաւ, եւ առանց անով ոչ ինչ եղաւ, ինչ որ եղաւ": Աշխարհը լեցուն է Աստուծոյ սրեղծածներով: Ապա կը ներկայացնէ ծովը, անոր մէջ պզտիկ ու մեծ կենդանիներ, ուր նաեւ կ'երթան եկեղեցին, հոն ուր նաեւ կը խաղայ վիշապը որ Ինք իսկ սրեղծեց: Այն վիշապը, որ լուսաւոր հրեշտակն էր, Արուսեակը, որ երկինքէն երկիր իյնկաւ: յարակօրէն կը ներկայացնէ, որ ամէն բարիք Աստուծմէ է որ կը փրուի: Իսկ երբ Աստուած անոնցմէ երես դարձնէ խռովքի կը մարմնուի: Որովհետեւ այդ բոլոր բարիքները իրենց կը վերագեն, եւ ահա Աստուծոյ երեսը դարձնելը աշիւծ է զգաստութեան, անդրադարձի, ու մանաւանդ՝ ապաշխարութեան ու վերադարձ առ Աստուած: Ահա այդ հպարտութիւնը մարդս հողին կը դարձնէ, բայց Աստուած կրկին Իր Հոգին կը դրկէ որպէսզի վերանորոգէ, եւ նոր ծնունդ փայ մեղաւոր մարդուն: Անոնցմէ առնելով անոնց հոգին ու փոխարէնը փալու Իր Սուրբ Հոգին: Ահա թող որ Տիրոջ փառքը մնայ յաւիտեան, եւ ոչ թէ մարդունը, Տէրը Իր գործերովը ուրախանայ եւ ոչ թէ մարդուն գործերովը: Որովհետեւ մարդուն գործը անմահ չէ: Շարու-նակելով կը ներկայացնէ, որ երբ Տէրը աչք մը նետ

աշխարհին աշխարհը կը դողայ, լեռները կը ծխան: Այսպեղ խորհրդանշական այս փողերը կը ներկայացնեն մարդուս խոնարհութիւնը կամ հպարտութիւնը: Դողայ, այսինքն՝ Տիրոջ երկիւղը ունենալ, իսկ լեռները իրենց վեհութեամբ եւ հպարտութեամբ, երբ Տէրը դպչի կը ծխան: Ի վերջոյ, կու գայ յայտարարելու, թէ ամբողջ կեանքի ընթացքին Տիրոջ համար պիտի երգէ, եւ ի՞նչ երգ, յոյսի երգը, այս կեանքէն դէպի միւսին երթալու, որ Աստուած պարտաստած ու խոստացած է փալու բոլոր անոնց որոնք այդ երգը պիտի երգեն: Ուստի կը խնդրէ որ այս մտածումները հաճելի եւ ընդունելի ըլլան Աստուծոյ, այս մտածումները իմ ով ըլլալս են, այն ինչ որ արդէն Աստուած գիտէ ու կը ճանչնայ, բայց եւ ինքզինքս յայտնելու, այնպէս ինչպէս Ինքզինք յայտնեց ինձի, Քրիստոսով: Իսկ ուրախութիւնս Տիրոջմով ըլլայ, եւ ոչ թէ ինձմով: Այն ուրախութիւնը, որ հակառակ ինչպիսին ըլլալս, սակայն, Աստուած ցոյց փուսա Իր ողորմութիւնը, եւ զիս ընդունեց, այնպէս ինչպէս ու կամ: Կը խնդրէ որ մեղաւոր-ները եւ ամբարիշտները ալ գոյութիւն չունենան, այսինքն՝ չարը, չարիքը եւ չարութիւնը ալ ջնջուին: Այս բոլորին համար, ուրեմն, ով իմ անձս օրհնաբանէ Տէրը, եւ դուք բոլորդ օրհնութիւն երգեցէք Տիրոջ, Իր հոգածութեան, սիրոյն ու ողորմութեանը համար:

Պատհասական ամենայնի Քրիստոս,
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ք արարածոց եւ ինձ բազմամեղիս:*